



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>

Էլ. փոստ՝ info@armin.am

ԱԳԱՆԱՅԻ 1909 թ. ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԱՐԶԱԳԱՆՔՆԵՐԸ ԱՐԵՎՄՏՏԱՀԱՅ ՄԱՄՈՒԼՈՒՄ

Տարեկի Ղալթախյան

1908 թ. գարնանը տեղի ունեցած երիտթուրքերի հեղաշրջման հետևանքով Օսմանյան կայսրությունում վերականգնվեց 1876 թ. սահմանադրությունը,¹ և երկրում առժամանակ հաստատվեց մամուլի ազատություն: Սահմանադրության ընդունումը և երիտթուրք կառավարողների շոյալ խոստումներն ընդհանրական հայրենիքի, Օսմանյան կայսրության բոլոր ազգությունների ազատության ու իրավահավասարության մասին լավատեսություն էին ներշնչում հայ հասարակությանը, այդ թվում և՛ հայ լրագրողներին: Սակայն այս բարենպաստ ժամանակաշրջանը շուտով ավարտվեց, և երիտթուրքերը, մոռանալով հեղաշրջման ընթացքում իրենց սատարած ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին տված խոստումները, արագորեն սահմանափակումներ մտցրեցին խոսքի ազատության մեջ:² Սահմանադրության և իրավահավասարության կարգախոսների նկատմամբ հայ ժողովրդի հավատն ու վստահությունը լքողորեն սասանվեց 1909 թ. ապրիլին Ադանայի նահանգում կազմակերպված կոտորածներով, որոնց հետևանքով զոհվեցին մոտ 30000 հայեր:

Ադանայի ջարդերը շրջադարձային նշանակություն ունեցան պոլսահայ և ընդհանրապես արևմտահայ մամուլի համար, որն ազատվեց երիտթուրքական կառավարության և կուսակցության՝ երկիրը քաղաքակրթելու և եվրոպականացնելու երևութական ու կեղծ ձգտումների նկատմամբ ունեցած պատրանքներից:

1909 թ. ապրիլին Ադանայում կազմակերպված հայության կոտորածներին հաջորդող առաջին ամիսներին արևմտահայ մամուլի հրապարակումները ցույց են տալիս, որ ջարդերը հայերի համար անսպասելի էին (թեև հայ ժողովրդի նկատմամբ բռնություններն ու ջարդերը սահմանադրության հաստատումից հետո էլ մշտապես շարունակվում էին): Թեպետ մամուլի հրապարակումներն աչքի էին ընկնում առավել տեղեկատվական, քան վերլուծական բնույթով, սակայն հրապարակվեցին նաև խիստ արժեքավոր նյութեր (հայ և օտարերկրյա ականատեսների վկայություններ, դիվանագիտական փաստաթղթեր, արտասահմանյան մամուլում լույս տեսած հոդվածներ և այլն), որոնք հայ հասարակությանը ներկայացրին Ադանայի 1909 թ. կոտորածների ողջ ընթացքն իր աղետալի հետևանքներով՝ այն հիմնավոր եզրակացությամբ, որ ջարդերի իրական կազմակերպիչները երիտթուրքերն են:

Մինչև սահմանադրության հռչակումը Ադանայում կյանքն ընթանում էր համեմատաբար խաղաղ՝ առանց սովորական այն հալածանքների, որոնք առկա էին մյուս նահանգներում, սակայն դրանից հետո նկատվեց որոշակի լարվածություն հայերի և թուրքերի միջև, ինչը հետևանք էր սահմանադրության հռչակմանը նվիրված բազմաթիվ ցնծության

1 1876 թ. «Նոր օսմանները» գահրնկեց արեցին սուլթան Աբդուլ Ազիզին և նոր գահակալ Աբդուլ Համիդ II-ին հարկադրեցին ընդունել իրենց պարագլուխներից մեկի՝ Միդհատ փաշայի կազմած սահմանադրությունը, սակայն Աբդուլ Համիդ II-ը 1878թ. վերացրեց սահմանադրական վարչակարգը և ստեղծեց միահեծան բռնակալական իշխանություն: Երիտթուրքական հեղաշրջման մասին մանրամասն տես Մ. Պիլկովա В., Младотурецкая революция 1908-1909 гг., М., 1977, Մանդելշտամ Ա., Երիտասարդ թյուրքերի պետությունը, Էջմիածին, 1916, Feroz Ahmad, The Young Turks. The Committee of Union and Progress in Turkish politics 1908-1914, London, 1969, Buxton R. C., Turkey in Revolution, London-Leipzig, 1909:

2 Սահակյան Տ., Մամուլի գրաքննությունը և լրահոսի նկատմամբ կիրառվող արգելքները Օսմանյան Թուրքիայում 1914-1916թթ., Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր, ՀՅԹԻ, թիվ 6, Եր. 2002, էջ 35:

հավաքների և հայերի մեծարման, որոնց իմաստը հետամնաց մուսուլմանները սխալ ընկալեցին և մասնակցեցին կազմակերպված ջարդերին ու թալանին:³ Ոգևորության այս շրջանում Թուրքիայի պատմության մեջ աննախադեպ հայերի և թուրքերի համերաշխության ցույցեր էին կազմակերպվում, թուրքական թերթերում բազմաթիվ հոդվածներ էին հրատարակվում հայ ժողովրդի մասին, հնչում փոխադարձ բարեմաղթանքներ: Երբ 1908 թ. աշնանը հիմնվեց հայկական «Ժամանակ» օրաթերթը, շուրջ տասը թուրքական թերթեր («Սապահ», «Իգդամ», «Յենի գազետա», «Սաատեթ», «Թանիհ», «Հուգուզը ումումիե», «Թերհիմանը հագիգաթ») ողջունեցին իրենց գործընկերներին՝ բարձր գնահատելով հայերի դերը թուրքական մշակույթի զարգացման գործում և ազատության համար մղված պայքարում:⁴ Նման միջոցառումներն առիթ հանդիսացան թուրքական հետադիմական շրջանների մոտ նախանձի և ատելության բորբոքմանը հայերի դեմ:

Դարակազմի մինչև Արդուլ Համիդի բռնապետության ավարտը, Կ. Պոլսում և Չմյուռնիայում լույս էին տեսնում շուրջ երկու տասնյակ հայկական պարբերականներ, իսկ 1908 թվականից մինչև Մեծ եղեռնը՝ ավելի քան 120 թերթեր և ամսագրեր:⁵ 1908-1914 թթ. արևմտահայ մամուլի զարգացման առանձին փուլ է: Այս շրջանում Կ. Պոլսում շարունակվում էին հրատարակվել հրատարակախոսական ու հասարակական արժեկշռով առանձնացող «Բյուզանդիոն» (1886-1918, տնօրեն՝ Բ. Քեչյան) և «Մանգումե-ի էֆքյար» («Մտորումների շարք», 1866-1919, հրատարակվում էր հայերեն, տնօրեն՝ Հ. Գայսերյան) օրաթերթերը: Իր հասարակական ու մշակութային կարևոր նշանակությունն էր պահում «Արևելյան մամուլ» շաբաթաթերթը (հրատարակվել է մինչև 1909 թ): Հեղափոխությունից հետո սկսեցին լույս տեսնել Կ. Պոլսում՝ «Ժամանակ» (1908-1914), «Կոհակ» (1909-1914), Չմյուռնիայում՝ «Դաշինք» (1909-1919) և «Աշխատանք» (1910-1914) թերթերը և այլն: Նկատելի էր նաև Արևմտյան Հայաստանում և Կիլիկիայում հրատարակվող պարբերականների թվաքանակի շեշտակի աճ:⁶ Այս շրջանում միայն Կ. Պոլսում հրատարակվում էին տասից ավելի արևմտահայ երգիծական պարբերականներ, որոնց ծնունդն իսկ ազատ մամուլի սկզբնավորման յուրօրինակ ցուցիչ էր: Պալմիրա Բրունթը 1908-1911 թթ. Կ. Պոլսի երգիծական մամուլի պատմությանը նվիրված իր ուսումնասիրության մեջ ցույց է տալիս, որ երգիծական մամուլն այս շրջանում այնքան ակտիվ և անկաշկանդ էր, որ իր քաղաքական ծաղրանկարների մեկնաբանման միջոցով ճնշում էր գործադրում Արդուլ Համիդ II-ի վրա՝ ընդունելու սահմանադրական վարչակարգը:⁷

Սահմանադրության առաջին օրերին հայ կուսակցությունները չունեին իրենց պաշտոնաթերթերը, բավարարվում էին գերազանցապես բանավոր քարոզչությամբ և իրենց գա-

ղափարները՝ տարածում գոյություն ունեցող թերթերով:⁸

1908 թ. երիտթուրքերի հեղաշրջումից հետո պարբերական մամուլի գործունեության համար սկսված բարենպաստ ժամանակաշրջանը՝ պայմանավորված գրաքննական հսկողության վերացմամբ, մեծ ոգևորություն առաջացրեց արևմտահայ մտավորականության շրջանում: «Ինչ ծանր անարգանք էր մարդկային հանճարուն այն ատելի և անմիտ գրաքննութեան ներկայութիւնը մամուլն քով: Այդ խաւարի պաշտօնայք խոյս տուին լոյսն, կը յուսանք, որ ալ չվերադառնան», - գրում է արևմտահայ գրող-հրատարակախոս Թեոդիկը (Թեոդորոս Լաբճիճյան) 1909 թ. «Ամենուն տարեցույցում»:⁹ «Ժամանակ» օրաթերթի առաջին համարում լույս տեսած «Կասկածոտները» հոդվածում գրող-հրատարակախոս Ջալալ Եսայանը 1908 թ. հուլիսի 11(24)-ը պատմական դարձած թվական է համարում, որից հետո արևմտահայ մամուլը, որը մինչ այդ լուծ էր, բարձրաձայնեց համերաշխության, եղբայրության, անհրաժեշտ պայքարի և քաղաքացիական պարտավորությունների մասին: Ջ. Եսայանը, խոսելով հեղափոխության շնորհած ազատության մասին, ափսոսանք է հայտնում, որ կան հոռետեսներ, որոնք կասկածներ են սերմանում հայության մեջ: Հեղինակը վստահեցնում է, որ հին օրերն այլևս չեն վերադառնա, և հոռետեսությունը դիտում է որպես տխուր երևույթ նոր կյանքի մեջ:¹⁰

Այս շրջանում արևմտահայ մամուլի էջերում հաճախ էին հնչում կարծիքներ, որ հենց մամուլը պետք է ցույց տար հայ ժողովրդի վերբերը բուժելու միջոցները և այն ուղին, որին պետք է հետևեր ժողովուրդը, և որ մամուլը պետք է լույս սփռեր խավարում գտնվողների վրա: Մինչդեռ ընթերցող հասարակությունը դատապարտված էր շարունակել կարդալ անձնական պոթեկումների արդյունք դարձած հրատարակումներ:¹¹ Ըստ արևմտահայ լրագրող Ենուվը Արմենի՝ պոլսահայ և ոչ մի թերթ, բացառությամբ «Բյուզանդիոնի», չկարողացավ հեռատեստրեն և անկաշկանդ վերլուծել քաղաքական դեպքերը. «Լրագրութիւնը, ինչպես բռնապետութեան շրջանին, նոյնպէս ազատ մամուլի շրջանին ալ, չկրցաւ հանդիսանալ ղեկավար ուժ մը՝ որ տէր ըլլար մտաւորական հոսանքին, զայն վարէր գիտակցօրէն և ուղղէր իր արժանի դերին»:¹² Քանի որ Կոստանդնուպոլիսն ու Չմյուռնիան արևմտահայ հասարակական մտքի կենտրոններն էին, որտեղ հրատարակվում էր արևմտահայ պարբերականների գերակշիռ մասը, ապա հենց այդ քաղաքների հայկական մամուլը պետք է հասարակության ուշադրությունը սևեռեր գավառում սկսված բռնությունների խնդրի վրա:

Երիտթուրքերի հեղաշրջումից հետո արևմտահայ թերթերում զգալի տեղ էր հատկացվում բռնատիրության տարիների վերապրումներին, տպագրվում էին մեծ քանակությամբ հուշեր: Նկատելի է նաև հայ ազգի թերությունների մեջ խորամուխ լինելու քննադատական ձգտումը, մինչդեռ երկրորդական նշանակություն էր տրվում երկրում օրեցօր ահագնացող տնտեսական ու քաղաքական բռնություններին (գավառի դրության վատթարացում, օսմանյան խորհրդարանի ընտրություններում փոքրամասնությունների ընտրական իրավունքների կազմակերպված ոտնահարում և այլն): «Ֆրու-ֆրու» շաբաթաթերթի տնօրեն Վահան Փափազյանը, անդրադառնալով մամուլում արձարծվող՝ հայերի նկատմամբ բռնությունների, վիլայեթներում ոչ հայ կուսակալներ նշանակելու և այլ խնդիրների նկատմամբ հայ ընթերցողի ունեցած հետաքրքրությանը, գրում է. «... ձեր իտէպն է աշխարհը

3 Տե՛ս Կ. Յ. Ա. Аданские черные дни, издание Х. А. Вермишева, Баку, 1909, с. 5:

4 Տե՛ս Ստեփանյան Գ., Ուրվագիծ արևմտահայ թատրոնի պատմության, հտ. III, Եր., 1975, էջ 12

5 Օսմանյան կայսրությունում գրաքննության կասեցմամբ հարյուրավոր նոր պարբերականներ հրատարակվեցին, ինչպես դա հետևեց Ֆրանսիական հեղափոխությանը: (Tülay Keskin, Feminist/Nationalist discourse in the first year of the Ottoman Revolutionary (1908-1909) Readings from the magazines of Demwt, Mehashi an Kadin (Salonica), The Institute of Economics and Social Sciences of Bilkent University, Ankara, 2003) Հեղափոխությունից հետո լույս ընծայված պարբերականների ընդհանուր թիվը ներկայացնելու հա-մար հեղինակը մեջբերում է տարբեր աղբյուրներ. ըստ դրանցից մեկի, եթե 1879-1907 թթ. լույս էին տեսնում 103 թուրքալեզու թերթեր, ապա միայն 1908թ հրատարակվեցին 240 նոր պարբերականներ, իսկ, ըստ մեկ այլ աղբյուրի՝ 1908 թ. նոր թերթերը 353-ն էին, 1910 թ.՝ 130, 1911թ.՝ 124 (դրանցից շատերը միայն մի քանի համար տպագրվեցին):

6 Տե՛ս Խառատյան Ա., Արևմտահայ մամուլը XX դարի սկզբին, Ժողովախոսիկա (Տեսության և պատմության, հարցեր), պ. Ա. Ե., 1999, էջ 79-80:

7 Tülay Keskin, Feminist/Nationalist discourse in the first year of the Ottoman Revolutionary (1908-1909),... p. 9.

8 Տե՛ս Սիրունի Յ., «Ազատամարտ»ի սերունդը, «Հայրենիք», Բոստոն, 1924, թիւ 7, էջ 81:

9 Աղանայան Մ., Թեոդիկի «Ամենուն տարեցույցը» 1907-1929, Եր., 1981, էջ 27:

10 Տե՛ս «Ժամանակ», Կ. Պոլիս, 15-18.X.1908:

11 Տե՛ս «Փիւնիկ», Կ. Պոլիս, 1909, թիւ 4, էջ 1: Տե՛ս նաև «Անդրանիկ», Սեբաստիա, 5-18.XII. 1909:

12 Ենուվը Արմեն, Թրքահայ գրականութիւնը մամուլի ազատութեան թականին, Ղայթախ, 1909, էջ 12:

մութ տեսնել, յուսահատական գտնել իրաց վախճանը եւ կոկորդիլոսի կեղծ արցունքներ թափել ձեր այնքան սիրած հայրենակիցներու թշուառութեան վրայ»:¹³

Սակայն Աղանայի 1909 թ. ջարդերը արևմտահայ մամուլը դուրս բերեցին այս թմբի-րից. մամուլի ուշադրության կենտրոնում հայտնվեց գավառում սկսված բռնությունների հարցը: «Արևելյան մամուլի» հոդվածագիր Լևոն Մկրտիչյանը ցավով է նշում, որ հայ ժողովուրդը չարաչար սխալվել ու խաբվել է՝ մի պահ հուսալով, թե թուրք սահմանադրական կառավարությունը արմատապես պիտի հեղաշրջեր երկիրը. այն նույն հին, կործանարար քաղաքականության շարունակողն էր, որի անմիջական հետևանքներից մեկը եղավ Աղանայի ջարդը:¹⁴ «Կոհակ» շաբաթաթերթը 1909 թ. մայիսի 30-ին հրապարակած հոդվածում հաղորդում է, որ «Սահմանադրութեան հռչակումէն ի վեր մեր թշուառացած հայրենիքը ոչ միայն իր որդիներու ստեղծագործ ու շինարար աշխատանքի պտուղները վայելելու բաղդը չունեցաւ, այլ սարսափի, կոտորածի կեանք մըն ալ անցուց և այժմ չգիտէ, թէ ինչ պիտի գայ իր գլխին: ...Կիլիկիայի կոտորածները եւ նման դէպքերը զօրաւոր պատճառներ են, որոնք առաջացնում են անվստահութեան ու թշնամութեան զգացումներ»:¹⁵ Իսկ «Կառափնատ» քաղաքական-երգիծական շաբաթաթերթի «Ջարդաբեր հողմունք» հոդվածում կարդում ենք. «Որո՞նք մտքէն կ'անցնէր թէ մէկ իյնող Համիտի փոխարէն բիրաւոր Համիտներ պիտի բուսնէին. որո՞նք մտքէն կ'անցնէր թէ Սահմանադրութեան վերահաստատումը աւելի փորձանաւոր պիտի դառնար քան Բռնակալութեան շարունակումը»:¹⁶

Հայ հասարակությունը սկզբնական շրջանում հավատաց երիտթուրքերի անհիմն հավաստիացումներին, թե Կիլիկիայի կոտորածները կազմակերպել են համիդյան վարչակարգի հետևորդները: «Բյուզանդիոնում» տպագրված լրատվությունից տեղեկանում ենք, որ Ջմյուռնիայի զինվորական հրամանատարն այցելել է Կ. Պոլսի հայոց պատրիարք Եղիշե եպ. Դուրյանին և, խոսելով Աղանայի վերջին կոտորածի մասին, հաստատել, որ այն կազմակերպել են բռնապետության կողմնակիցները:¹⁷ Սկզբնական շրջանում «Ժամանակը» ևս հավատում էր, որ Աղանայի ջարդը «հին իրադարձությունների հետևանք է», և վստահեցնում էր ժողովրդին, որ հայության նկատմամբ որևէ մասնավոր թշնամանք չկա, քանի որ հայ ժողովրդի ճակատագիրը կապված է երկրի ընդհանուր ճակատագրի հետ:¹⁸ Իսկ «Արևելյան մամուլը» արդեն ապրիլի 28-ին գրում է. «Այդ ամէն ահռելի եւ սարսափելի դէպքերն ու իրողութիւնները մեծ մարդասպանին վերագրուեցան եւ մեզի կ'մնար յամոզվիլ ու ընդունիլ այս վերագրումը, իբրեւ ամէն մեղմացուցիչը եւ նպատակահարմարը՝ մխիթարութեան ամենափոքր եզր մը գտնելու համար»:¹⁹ Հատկանշական է, որ այս հրապարակման մեջ ընդգծվում էր նաև այն, որ հայերը չէին ցանկանում հավատալ երիտթուրքերի մեղսակցությանը: Երիտթուրքերի նկատմամբ հայերի վստահության մասին է խոսվում նաև «Նյու Յորք թայմս»-ի 1909 թ. ապրիլի 23-ին հրապարակված հաղորդագրության մեջ. «Հայերը, ընդունելով, որ կոտորածները կազմակերպել և իրագործել են համիդյան վարչակարգի հետևորդները, հետագա պաշտպանություն են սպասում երիտթուրքերից»:²⁰

13 «Ֆրու-ֆրու», Կ. Պոլիս, 1909, թի 5, էջ 1:

14 «Արևելյան մամուլ», Ջմյուռնիա, 1909, թի 23, էջ 53:

15 «Կոհակ», Կ. Պոլիս, 30.V.1909:

16 «Կառափնատ», Կ. Պոլիս, 1910, թի 9, էջ 132:

17 «Բյուզանդիոն», Կ. Պոլիս, 23.IV-6.V.1909:

18 «Ժամանակ», 4-17.IV.1909:

19 «Արևելյան մամուլ», 1909, թի 18, էջ 509-510:

20 Kloian R., The Armenian Genocide. News Accounts from the American Press 1915-1922, USA, 2004.

Ջարդերը համիդյան վարչակարգի հետևորդների կողմից կազմակերպելը հավանական էր թվում այն պատճառով, որ հին պաշտոնյաներից շատերը երիտթուրքական հեղաշրջումից հետո էլ, հատկապես գավառներում, պահպանում էին իրենց դիրքն ու հեղինակությունը: Սակայն կարճ ժամանակ անց՝ մայիս-հունիս ամիսներին, պոլսահայ մամուլին հայտնի դարձավ ջարդերին երիտթուրքական իշխանությունների ոչ միայն մասնակցությունը, այլև կազմակերպիչ դերակատարությունը: Կառավարությունը պատասխանատուներին պատժելու փոխարեն ոչ միայն կոտորածների ողջ մեղքը բարդեց հայերի վրա, այլև արգելեց անգամ սպանվածների անունները հաղորդել իրենց հարազատներին՝ թույլատրելով հիշատակել միայն ողջ մնացածներին: Տարօրինակ չէ, որ հայ կոտորելը չէր արգելվում, սակայն սպանվածների անունները տեղեկացնելն արգելվում էր:²¹

Մայիսի 13-ին «Ժամանակում» լույս տեսավ ջարդերի ականատես Լևոն Փափագյանի հոդվածը, որում հեղինակը կոտորածների կազմակերպման ընթացքում անուրանալի էր համարում «Իթիտալ» («Երևակայություն») լրագրի խմբագրապետ Իսահան Ֆիքրիի դերը, որը, Աղանայում ջարդեր հրահրելու գործում Իթիթիստիկ օգնող ամենամեծ ուժը լինելով, տպագրում էր հայերին զրպարտող սուտ լուրեր:²² Նման հրապարակումները նպատակ ունեին մահմեդականներին զրգոելու հայերի դեմ. «Ներիաթապաշտներուն դրդիչներու բուն նպատակները թէւ քաղաքական էին, բայց անոնք կրօնական մոլեռանդութիւնը գրգռելով միայն կրնային իրենց այդ նպատակներուն հասնիլ»:²³

Արևմտահայ մամուլում օր օրի գերակշռում էին հռչակված սահմանադրության նկատմամբ քննադատական և անվստահ վերաբերմունք ունեցող նյութերը: Իսկ ավելի ուշ «Բուրթանիա» պարբերականում հոդվածագիր Ա. Պազպազյանը, խոսելով սահմանադրության հռչակումից հետո խոստացված համերաշխության և այդ ուղղությամբ ոչ մի քայլ չարած երիտթուրքերի մասին, համոզված է, որ «որևիցե գաղափար մը կարելի է իրականացնել հոն՝ ուր զանիկա ըմբռնելու, մարտելու կարողութիւնն ու տրամադրութիւնը կայ: ...այլապէս, ինչով բացատրել այն բոլոր սարսափներն ու ատելութիւնները՝ որ սահմանադրութեան առաջին օրերուն իսկ անցաւ հայաբնակ գաւառներու, քաղաքներու վրայէն...: Ինչպէս մեկնել, ու ինչով արդարացնել վերջապէս Ատանայական Մեծ Եղեռնը, որ ամէնէն խոշոր վերքը բացաւ Հայութեան կողին վրայ...»:²⁴ Այս կոտորածները հասարակության կողմից չէին ընկալվում որպես առանձին դէպքեր, այլ՝ շարունակական քաղաքականության մի մաս: Արևմտահայ մամուլի էջերում այս ջարդերը համիդյան կոտորածների հետ համեմատելիս էլ ավելի սարսափելի էին ներկայացվում և նույնիսկ բնորոշվում որպես Մեծ եղեռն, երբեմն ակնարկվում էր նաև սպասվող ավելի մեծ արհավիրքի մասին:²⁵

Արևմտահայ մամուլի էջերում տեղ գտան նաև ջարդերի գեղարվեստական նկարագիրը կրող հրապարակումներ: «Տխուր խոհեր Ատանայի կորուստին առթիվ» հոդվածում հեղինակը, նկարագրելով «արիւնոտ հայրենիքն ու տխրատեսիլ իրականութիւնը», նշում է, որ հայությունը ստիպված է «ապրիլ առանց ապագայի, ապրիլ առանց ժպիտի, ապրիլ ցաւոտ ու փշոտ սրտով, միշտ ձեռքը կուրծքին... միշտ սուրը գրլխուն...»:²⁶

Կիլիկիայի կոտորածներից հետո երիտթուրքական իշխանությունները սաստկացրին

ներդիր, p. 17.

21 Աշնեան Հ., Ատանայի եղեռնը եւ Գոնիայի յուշեր, Նիւ Եորք, 1950, էջ 22:

22 «Ժամանակ», 13-26.V.1909:

23 «Սասուն», Կ. Պոլիս, 1909, թի 3, էջ 1-2:

24 «Բուրթանիա», Ատաբազար, 1910, թի 7, էջ 1-2:

25 «Ավետարեք», Կ. Պոլիս, 1910, թի 1, էջ 21:

26 «Անդրանիկ», Սեբաստիա, 16.V. 1909:

արևմտահայ մամուլի նկատմամբ հետապնդումները: «Ձայն հայրենյաց» շաբաթաթերթը հաղորդում է, որ «Մանգումնի էֆքյարում» հրապարակված «Ընդհանուր ջարդ» հոդվածի համար Ա. Բյուրքյանը և թերթի արտոնատերը ենթարկվել են հետապնդումների, և նրանց գործերը հանձնվել են Պատերազմական ատյան, իսկ «Բյուզանդիոն» օրաթերթի հրատարակությունը դադարեցվել է (տուգանքների ենթարկվեց և որոշ ժամանակով դադարեցվեց նաև «Մանգումնի էֆքյարը»):²⁷ Արևմտահայ մամուլի նկատմամբ վերսկսված հետապնդումների առիթով Թեոդիկը գրում է. «Տպագրական տեսչութեան մոլեգնոտ հարկերի տակ վերստին իր կեղակարծ ներկայութիւնն էր դրել» գրաքննությունը, որի նպատակն էր «սանձել մասնատրապէս իրերապարսաւ պայքարը» և հատկապէս «իրենց կապանքները թօթափած... տարիների բռնակալութեան դէմ քինայույզ յարձակումներ» գործող լրագրողներին:²⁸

Ջարդերի հենց սկզբից Կ. Պոլսի ու Ջմյուռնիայի հայկական պարբերականների էջերում տպագրվեցին աղետալի դեպքերը մանրամասն նկարագրող ակնառեսների վկայություններ: Հասարակական գործիչ Արշակուհի Թեոդիկը (Ճեզվեճյան), որը «Ազգանվեր հայուհյաց ընկերության» կողմից աղետայուններին օգնելու համար մեկնել էր Կիլիկիա, գրում է, որ շատ հայերի տներում նույնիսկ արգելված էր թերթերում հրապարակված ակնառեսների սարսափելի պատմությունները կարդալ, քանի որ «անոնցմով խորապէս ազդուողներ էին եղած, զգայնիկ անձեր՝ սուկումէ ցնցում, ցնցումէ տագնապ ծածանուտ՝ հիվանդ ինկած էին»:²⁹ Ապրիլի 2-ին Ադանայից փախստական մի հույն պատմում է. «...Հայոց թաղը կրակի մէջ էր. տուն մը այրեցին, որուն մէջ 250 հոգի լեցուած էին, նաեւ ուրիշ շատ մը տուներ, եւ դեռ կրակի մէջ էր... ճամբուն վրայ 500 տուննոց Հայ գիւղ մը այրացաւեր ըրած էին. Մարդ չէր մնացած... Ջարդն սկսաւ երեկ իրիկուն ժամ 3ին, եւ դեռ լրացած չէր այս առաւօտ: Ջորքերն օգնեցին ամէն կերպով. Իրենց հրացաններով թէ՛ մարդ զարկին եւ թէ՛ խանութներու դուռները կտտրելով օգնեցին, եւ իրենք ալ լցուեցան աւարով: Էշրաֆն և ուլեման³⁰ կրնային առաջքն առնել, բայց թուրքերը կ'ըսէին թէ վերէն հրաման կար որ չմիջամտեն: ... Աստուած ողորմի այս բազմաչարչար Ազգին»:³¹ Ջարդերի ակնառեսն Հակոբ Թերզյանը գրում է, որ Կ. Պոլսի մի օրաթերթի ցանկացել է հեռագիր ուղարկել «սարափելի ջարդ, թալան, հրդեհ, սոսկալի թշուառութիւն, պաշարման վիճակ» բովանդակությամբ, սակայն հեռագրատան պաշտոնյաները չէին ընդունել՝ ասելով, որ կուսակալն արգելել է ջարդի մասին հեռագիր ուղարկել, և իրենց տրված հրամանի համաձայն՝ խմբագրում էին մնան հեռագրերը «ողջ առողջ ենք» խոսքերով:³²

Կոտորածների ընթացքում և հետո Կ. Պոլսի և Ջմյուռնիայի հայ մամուլում հրապարակվեցին նաև օտար ակնառեսների վկայություններ և այդ օրերին արտասահմանյան մամուլում լույս տեսած նյութեր: «Ատանայի ջարդերն ամերիկացի միսիոնարներուն համեմատ» խորագրով «Բյուզանդիոնը» տպագրեց հեռագրերի շարք: Ադանայում ամերիկացի միսիոններների ղեկավար Ուիլյամ Չեմբերսը մայիսի 1-ին Մերսինից Լոնդոն ուղարկած հեռագրի մէջ գրում է. «... Ջարդը կատաղաբար վերսկսաւ կիրակի օրը: Ապրիլ 12(25)ին, զօրքերն ու պաշտպազուցները սարսափելի հրացանածգութիւն մը սկսան Հայոց վարժարանի վրայ, ուր իբր երկու հազար անձինք ապաստանել էին: Իսկոյն հրդեհեցաւ շէնքը, եւ

27 Տես «Ձայն հայրենեաց», Կ. Պոլիս, 10-23.IV.1909:
28 «Ամենուն տարեցոյցը», Կ. Պոլիս, 1916-1920 թթ., էջ 270:
29 Թեոդիկ Ա., Ամիս մը ի Կիլիկիա, Կ. Պոլիս, 1910, էջ 24:
30 Թուրք երևելիներ և հոգևոր դասի ներկայացուցիչներ (eşraf, ulema):
31 «Բիւզանդիոն», Կ.Պոլիս, 8.IV-21.V.1909: Տես նաև «Ձայն հայրենեաց», 10-23.IV.1909:
32 Թեթգեան Յ., Կիլիկիոյ աղետը, Կ. Պոլիս, 1912, էջ 58:

չէնքէն փախչող ապաստանեալները դուրս երեւալուն պէս հրացանի բռնուեցան: Շատերն ալ կորան բոցերու մէջ: Աերիչ հրդեհն անխափան շարունակեցաւ մինչեւ Գշ. առաւօտ, հրոյ ճարակ ըլլալով չորս եկեղեցիք եւ անոնց դպրոցները, եւ հարիւրաւոր տուներ...»:³³ Բյուզանդ Բեչյանը հրապարակեց Տարսուսի ամերիկյան քոլեջի նախագահ Թոմաս Քրիստիի վկայությունները, որը ջարդերի առաջին օրը Ադանայում էր եղել և, անձամբ շրջելով կոտորածների վայրերում, կազմել բազում վիճակագրեր, ցուցակներ ու տեղեկագրեր կոտորածների մասին: Քրիստիին դատապարտում է Ադանայի կուսակալ Ջևադ բեյին՝ հայերին ջարդելու պատրաստությունները չկանխելու, կատարվածին որևէ արգելք չդնելու, այլ ընդհակառակը՝ զրգոյիչ հեռագրերով շրջակա բնակավայրերի մահմեդականներին ևս հայերի դեմ տրամադրելու համար:³⁴ Անգլիայի հյուպատոսատան առաջին թարգմանիչ Պ. Ֆիցմորիսը, լինելով հայասեր և մարդասեր անձնավորություն, խորապէս ազդված Ադանայի նահանգի արյունահեղ դեպքերից, ջարդերի առաջին օրերին հայտարարում է. «Ատանայի խոտվութիւնները արդէն նախապէս պատրաստուած ծրագրի մը հետեւանքներն էին եւ անոնք բնաւ որեւէ կապ չունին ռեաքսիոնեռական այն շարժումին որ պայթեցաւ անցեալ շաբաթու մէջ»:³⁵

Այս ամիսներին արևմտահայ թերթերի էջերում սկսեցին տպագրվել ջարդերի ընթացքը նկարագրող դիվանագիտական փաստաթղթեր: «Արևելյան մամուլի» 1909 թ. ապրիլի 28-ի համարում Մերսինում և Իսկենդերունում (Ալեքսանդրետ) հավատարմագրված օտարահպատակ փոխհյուպատոսները³⁶ հրապարակեցին կիլիկյան կոտորածների վերաբերյալ պաշտոնական տեղեկություններ պարունակող երկու նամակ. «Պատմութիւնը այս դեպքերը պիտի արձանագրէ ամենասեւ գույներով... Ջարդ, թալան, հրդեհ և բռնաբարում առանց խղճահարութեան: Մարդկութիւնը կ'ահաբեկի այս տեսարաններէն: Ատանայի շրջակաները (Հաճըն, Տեորթ Եոլ ևն) ինչպէս նաև Թարսուս, զոհերով լեցուած է, մարդիկ, կանայք եւ երեխաներ եւ ասոնց մեռելական լուսինը ցոյց կուտայ աղէտին մեծութիւնը», - գրում է Մերսինի փոխհյուպատոսը (13(26).IV.1909) և վերջում ավելացնում, որ ցանկալի է՝ քաղաքակիրթ Եվրոպան հաշվի առնի XX դարում տեղի ունեցած այս անօրինակ դեպքերը և ըստ այդմ գործի:³⁷ Երկրորդ նամակում (12(25).IV.1909) Ալեքսանդրետի փոխհյուպատոսը ներկայացնում է Ադանայի նահանգի ջարդերի արձագանքը շրջակա բնակավայրերում և տեղեկացնում, որ Դյորթ Յոլի 5000 հայ բնակիչ ունեցող գյուղերը պաշարված են զինված 15000 քուրդ լեռնականներով և մի քանի հարյուր չերքեզներով, Բայասի բանտի բանտարկյալները ազատ են արձակվել և ջարդում, թալանում ու հրդեհում են տեղի գյուղերն ու ազարակները, նաև տեղեկացնում է, որ թուրքական մի նավ՝ 550 հոգանոց կանոնավոր զորքով, ուղղվել է դեպի Դյորթ Յոլ (Չոք Մարգալան) անդորրությունը վերահաստատելու համար, և հույս է հայտնում, որ նրանք չեն միանա ջարդարարներին հայ ազգը մեկընդմիջտ ոչնչացնելու համար:³⁸

Ջարդի բուն կազմակերպիչների՝ նոր իշխանությունների իրական պատկերը պետք է ի հայտ գար նաև այն բանից հետո, երբ նրանք, ճիշտ համիդյան ոգով, կոտորածների ամբողջ մեղքը սկսեցին բարդել հայերի վրա՝ նրանց մեղադրելով զինված կոմիտե ստեղծելու, առանձին «թագավորության» երազանքներ փայփայելու և օսմանյան Թուրքիան անդա-

33 «Բիւզանդիոն», 25.IV-8.V.1909:
34 Նույն տեղում, 14-27.VII.1909:
35 «Արևելք», Կ. Պոլիս, 9.IV.1909:
36 Ցավովք, մեզ չի հաջողվել պարզել նրանց անունները և որ երկրի ներկայացուցիչ լինելը:
37 «Արևելեան մամուլ», 1909, թիւ 18, էջ 519-521:
38 Նույն տեղում, էջ 521-522:

մահատելու դավաճանական ձգտումների մեջ: Ադանայի Պատերազմական ատյանի՝ Բ. Դռանն ուղղված տեղեկագրում հայերը մեղադրվում էին որպես անկախության կողմնակիցներ. Ադանան, ըստ այդ տեղեկագրի, հայերն ընտրել էին որպես խռովության համար առավել հարմար վայր և ի սկզբանե այստեղ միջոցներ էին ձեռնարկել և նախապատրաստվել:³⁹ Միջոցների շարքում նշվում էր կայսրության տարբեր շրջաններից մեծ թվով հայ մշակների Ադանա գալը, որը գարնան և ամռան ամիսներին սովորական երևույթ էր: «Ատանայի մեջ կ'ամփոփուէր ամենաստուար հայութիւնը իր տնտեսական ու հողագործական բարգաւաճ կեանքով», ուստի այս անգամ գլխավոր հարվածը հասցվեց Ադանայի ուղղությամբ, «քանի որ Ատանային տրուելիք հարածը Կիլիկիոյ սրտին տրուած մահացու հարուածը պիտի ըլլար»:⁴⁰ Հունիսի 6-ին վերը նշված տեղեկագրի բոլոր կետերին հակադարձող փաստարկներ է բերում իր վերլուծական հոդվածում Բյուզանդ Քեչյանը:⁴¹

«Բյուզանդիոն» օրաթերթում տպագրված «Կիլիկյան արհավիրքը» հոդվածում Մուրեն Պարթևյանը ևս, ներկայացնելով կիլիկիահայության կոտորածների ընդհանուր պատկերը, անդրադառնում է իշխանությունների բռնած դիրքին. «Ասոնք կ'արդարացնեն կատարուած ու շարունակուող սոսկավիթխար հրեշտութիւնը: ...եւ կը համարձակին արիւնի մեջ լողացող Կիլիկեցիս ամբաստանել իբրեւ ապստամբ ու անջատական ձգտումներու գործիքն ու արտայայտիչը: ...Մինչեւ երբ մեր արիւնն ու արցունքը պիտի հոսի «Հայկական թագաւորութեան» մը ցնորական, զառանցական վարկածին անունով...»:⁴² 1909 թ. մայիս-հունիս ամիսներին «Արևելյան մամուլի» էջերում բազմաթիվ էին երիտթուրքական կառավարությանը քննադատող հոդվածները, քանի որ ջարդերի բուն պատասխանատվությունը խոստովանելու փոխարեն, իշխանություններն ընտրել էին մեղքը հայերի վրա բարդելու քաղաքականություն:⁴³ Կոտորածներից անմիջապես հետո որպես կոտորածների մեղավորներ Մերսինում և Ադանայում բազմաթիվ հայեր բանտարկվեցին: «Մանգումեի էֆքյար» օրաթերթի մայիսի 4-ի համարում տեղեկանում ենք, որ Ադանայում արդեն 300-ից ավելի հայեր բանտարկված են, իսկ «Մերսինի մեջ բանտարկեալ ունինք Մոստեղեանը, որուն յանցանքն է տունէն Լեւոն թագաւորին սուրին պատկերը եւ մի քանի հայկական պատկերներ ելնելը, Էւերեկցի երիտասարդ մը, որուն քովէն նմանապէս պատկերներ եւ գրքեր ելած են...»:⁴⁴ Նման անհիմն մեղադրանքներից հետո «Արևելյան մամուլը», «Բյուզանդիոնը», «Ժամանակը», «Մանգումեի էֆքյարը», «Ձայն հայրենյացը» և այլ թերթեր հրապարակեցին կոտորածների կազմակերպիչներին՝ երիտթուրքերին, մերկացնող նյութեր:

Ուշագրավ են նշված թերթերի այն նյութերը, որոնք վերաբերում են Հասանբեկ գյուղի, Դյորթ Յոլի, Հաճրնի ինքնապաշտպանական հերոսական կռիվներին: Կազմակերպված ինքնապաշտպանության շնորհիվ հաջողվեց կասեցնել խուժանի ու զորքի հարձակումը և փրկվել ջարդից: «Ժամանակի» մայիսի 12-ի հրապարակումներից մեկում ասվում է, որ թեև Դյորթ Յոլի երեք գյուղերի 15000 հայեր, երկար ժամանակ պաշարված լինելով 30000 թուրքերի կողմից, ի վերջո կարողացել են փրկվել, միևնույն է, հայերի ապագան

մութ է, քանի որ տեղի իշխանությունները «հայակերներ» են:⁴⁵ Կարելի է եզրակացնել, որ չնայած ինքնապաշտպանությունն ընկալվում էր որպես կոտորածը կանխելու միակ ուղի, այնուամենայնիվ, հայ ժողովրդի հետագա ճակատագիրն անորոշ էր թվում: Կիլիկիահայության փրկության համար մամուլում շրջանառվում էին գաղթելու, դավանափոխ լինելու և օտար միջամտությունից օգնություն ակնկալելու միջոցները:⁴⁶ Դաշնակցության պաշտոնաթերթ «Դրոշակը» արևմտահայ մամուլին կոչ էր անում գործադրել բոլոր ուժերը արտագաղթի վտանգավոր գործընթացը կանխելու համար, քանի որ համիդյան կոտորածներից հետո անգամ այն այսքան մեծ չափերի չէր հասնում:⁴⁷ Ադանայի եղեռնի մասին օսմանյան խորհրդարանի համար պատրաստած իր տեղեկագրում Հակոբ Պապիկյանը ցավով եզրակացնում է, որ Միություն և առաջադիմություն կուսակցության անդամները մասնակցել են Ադանայի եղեռնագործության կազմակերպմանն ու իրագործմանը և նշում, որ այս իրողությունը հաստատված է նահանգի տարբեր հյուպատոսների, ամերիկացի միսիոներների և այլ անձանց կողմից, իսկ արտասահմանյան մամուլի արձագանքների շնորհիվ հասարակական կարծիքը ևս գրեթե համոզված է, որ ջարդերը իրագործել են երիտթուրքերը:⁴⁸

Մուշեղ եպիսկոպոսը «Հայկական մղձավանջը» գրքում իրավացիորեն փաստում է. «Իթթիհատ արիւնի ճամբուն վրայ իր հանդիսատր մուտքը ըրած էր Ատանայով: Դժուարթիւնը կը կայանար սկզբնաւորութեան և առաջին պատասխանատութենէն հաջող խուսափումին մէջ: Երկուքին մէջ ալ յաջողած էր»:⁴⁹ Կոտորածներից ամիսներ անց իրավիճակը Կիլիկիայում շարունակում էր լարված մնալ, և օդում կախված էր ջարդի սպառնալիքը: «Մանգումե-ի էֆքյար»-ի հրապարակումներից մեկում ընդգծվում էր այս կոտորածների կրկնության հավանականությունը և հաղորդվում, որ վախի մթնոլորտն արդեն առկա է Կարինում, Մուշում և Տիգրանակերտում: Հաշվի առնելով այն, որ վտանգը դեռ չի անցել, աշարջությունն ու ամուր ինքնապաշտպանությունը դիտվում էին որպես նոր կոտորածները կանխելու միակ հուսալի միջոց:⁵⁰

1909 թ. Ադանայի և հարակից շրջանների կոտորածների վերաբերյալ արևմտահայ մամուլի առաջին արձագանքներում թեպետ գերիշխում էին ջարդերը համիդյան ռեժիմի հետևորդների կողմից կազմակերպված լինելու տեղեկությունները, սակայն հաջորդող մի քանի ամիսներին արևմտահայ մամուլի հրապարակումների մեծ մասը հասարակությանը բերեց այն իրական համոզմանը, որ ջարդերը կազմակերպված և իրահրված են եղել երիտթուրքական կուսակցական ու կառավարական կենտրոններից, և դրանց իր անմիջական մասնակցությունն է բերել նաև թուրքական կանոնավոր զորքը: Հաճախ, թեև քողարկված, մատնանշվում էր կոտորածների շարունակելի լինելը կամ հայերի զոհության բացակայության դեպքում նոր, ավելի կործանարար ջարդերի հավանականությունը: Նշված ժամանակահատվածում մամուլը հակադարձեց հատկապես երիտթուրքական կառավարության՝ հայերին որպես կոտորածների մեղավոր ներկայացնելու անհիմն փորձերին: Հարկ է նշել, որ Ադանայի կոտորածներից հետո արևմտահայ մամուլի էջերում հրատարակվում էին Օսմանյան կայսրության բոլոր ազգություններին ուղղված՝ համերաշ-

39 Տե՛ս Բիւզանդիոն, 3-16. VII. 1909:

40 Մուշեղ եպիսկոպոս Սերովբեան, նշվ. աշխ., էջ 11:

41 «Բիւզանդիոն», 6-19. VII. 1909:

42 Նույն տեղում, 27. IV-10. V. 1909: Տե՛ս նաև Պարթևեան Ս., Կիլիկեան արհաւիրքը, Կ. Պոլիս, 1909, էջ 39:

43 Տե՛ս «Արեւելեան մամուլ», 1909, թիւ 24, էջ 553:

44 «Մանգումեի էֆքեար», 4.V. 1909:

45 «Ժամանակ», Կ. Պոլիս, 12-25 մայիսի, թիւ 174, 1909, էջ 2:

46 Տե՛ս «Կոհակ», 30.V.1909:

47 Տե՛ս «Ազդակ», 12/25. IX. 1909:

48 Ատանայի եղեռնը, Տեղեկագիր Յակոբ Պապիկեանի օսմանեան երեսփոխան Էտիրնէի, Կ. Պոլիս, 1919, էջ 42:

49 Մուշեղ արքեպիսկոպոս, Հայկական մղձավանջը, Բոստոն, 1916, էջ 41:

50 «Մանգումեի էֆքեար», 4. IV. 1909:

խության կոչեր պարունակող հոդվածներ, որոնք, թերևս, նպատակ ունեին նպաստելու թուրքերի և քրիստոնյա ազգային փոքրամասնությունների խաղաղ գոյակցության: Ընդ որում, նման հրապարակումներում ընդգծվում էր ոչ միայն համերաշխության ստեղծման ուղղությամբ երիտթուրքական իշխանությունների անգործությունը, այլև նոր ջարդեր հրահրելու նրանց քաղաքականությունը:

Այսպիսով, Կոստանդնուպոլսի և Ջմյուռնիայի հայ մամուլի՝ կիլիկիահայության կոտորածները լուսաբանող հրապարակումները կարողացան լույս սփռել 1909 թ. Ադանայի կոտորածների իրական պատճառների վրա, իսկ որոշ դեպքերում՝ մատնանշել նաև ջարդերի իրական կազմակերպիչներին՝ երիտթուրքական իշխանություններին:

Tatevik Ghaltakhchyan
**The First Reflections of the 1909 Adana Massacres
in the Western Armenian Press**

Summary

The Armenian massacres of April 1909 organized in Adana and surrounding regions were covered intensively in the Western Armenian press. The media outlets show that the information on the massacres in Adana and neighboring regions, organized by the Hamidian regime, were dominant in the Western Armenian press. Later most of the publications in the Western Armenian press tried to convince the society that the massacres were organized and provoked by the leaders of Young Turks and the government itself. In addition, Turkish regular army directly participated in the massacres of these period. In response to the baseless attempts of Young Turks' government to represent the Armenians as guilty in the massacres the Armenian press published many opposing articles. The Young Turks ignoring their promises given during the revolution limited the freedom of speech by resuming the persecution of the Western Armenian printed media.